RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2022

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2022 թ. Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:
Բանկերի քանակը դարձել է 18
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն գրանցվել է որպես «Ֆասթ Բանկ» ՓԲԸ:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2022 թվականի ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **263 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **197 մլրդ ՀՀ դրամով** կամ **4 անգամ** ավել է քան 2021 թվականի ընթացքում գրանցած արդյունքը:

- Այդ արտասովոր մեծ աճը հիմնականում պայմանավորված է, բանկերի ոչ-տոկոսային եկամուտների աճով (միջնորդավճարներ, արտարժույթի փոխարկումներ, և այլն):

Բանկերի զուտ շահույթը - 2022 թ. (մլն ՀՀ դրամ)



ROAE

- Բանկային համակարգի ROAE ցուցանիշը 2022 թվականի ընթացքում աճել է 3 անգամով (**7.1%-**ից՝ **23.3%)**:
- Բանկային համակարգի սեփական կապիտալը 2022 թվականի ընթացքում աճել է **40%-**ով և 31.12.2022թ. դրությամբ կազմել **1.316 մլրդ ՀՀ դրամ:**

Զուտ շահույթ/ընդհանուր կապիտալ միջին հարաբերակցության (ROAE) համեմատական ըստ բանկերի 2022 թթ.



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2022թ. աճել են **1.338 մլրդ ՀՀ դրամով,** կամ **19%**:

- Առ 31.12.2022, ընդհանուր ակտիվները կազմել են **8.409 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր ակտիվները - 31.12.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **57.5%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **43.3%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **18.5%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.22



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2022թ. ընթացքում աճել է **3.2%**-ով:
- Առ 31.12.2022 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.168 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **50%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ եւ Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **60.1%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **42.4%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **17.6%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.22



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2022թ. ընթացքում աճել են **964 մլրդ ՀՀ դրամով,** կամ **16%:**

- Առ 31.122.2022, ընդհանուր պարտավորությունները կազմել են **7.093 մլրդ ՀՀ**:



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2022թ. աճել են **1.114 մլրդ ՀՀ դրամով,** կամ **29%**:
- Առ 31.12.2022, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **4.987 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **70%:**

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- 31.12.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը նվազել է 2022թ. ընթացքում **101 մլրդ ՀՀ դրամով,** կամ **23**%-ով: Հնարավոր նվազման պատճառներից մեկը կարող է հանդիսանալ այն փաստը, որ 2022թ ՀՀ ԿԲ փոփոխել է պարտատոմսերի պահուստավորման նորմատիվը, որը ժամանակին խթան էր հանդիսացել բանկերի կողմից պարտատոմսեր թողարկումների մասով:
- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.12.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2022թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **372 մլրդ ՀՀ դրամով**, կամ **40%** ու կազմել **1.316 մլրդ ՀՀ դրամ**:
- Կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) աճել է **162 մլրդ ՀՀ դրամով**: Նշված աճը հիմնականում պայմանավորված (1) ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ի կանոնադրական կապիտալի աճով, որը ավելացել է շուրջ 128 մլրդ ՀՀ դրամ-ով: Բանկի նոր բաժնետերերն են ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ը (75% բաժնեմաս) եւ <<Բնակարան երիտասարդներին>> վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ-ը (25% բաժնեմաս), ինչպես նաև Ֆաստ Բանկի կապիտալի աճով – **23 մլրդ ՀՀ դրամով**



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.12.2022թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **55.6%**-ը և հավասար է **732 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.12.2022թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **43.8**%-ը և հավասար է **577 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.12.2022թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **0.6%**-ը և հավասար են **7.5 մլրդ ՀՀ դրամ**:

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.12.2022



Կուտակված շահույթ (վնաս)

- 2022թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **231 մլրդ ՀՀ դրամով**, կամ **67%,** կազմելով **577 մլրդ ՀՀ դրամ**:

- 2022թ. ընթացքում շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են **9** բանկ՝ընդհանուր գումարով **35 մլրդ ՀՀ դրամ**

1. Արդշինբանկ – ***17.2 մլրդ ՀՀ դրամ,***
2. Ինեկոբանկ – ***6 մլրդ ՀՀ դրամ,***
3. ԱԿԲԱ Բանկ – ***3.3 մլրդ ՀՀ դրամ,***
4. *ԱրարատԲանկ – **3 մլրդ ՀՀ դրամ,***
5. *Ֆաստ Բանկ - **2 մլրդ ՀՀ դրամ,***
6. ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – ***1.38 մլրդ ՀՀ դրամ***
7. *Յունիբանկ – **0.98 մլրդ ՀՀ դրամ,***
8. *Կոնվերս Բանկ – **0.51 մլրդ ՀՀ դրամ,***
9. *Էվոկաբանկ – **0.6 մլրդ ՀՀ դրամ,***

RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am